ՈՒՐԱՐՏԱ–ԱՍՈՒՐԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐԳՈՆ II–Ի ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՀԵՏՈ

ՎԱՀԱՆ ԳԱՅՍԵՐՅԱՆ

Մ. թ. ա. 714 թ. Սարգոն II-ի (721—705 թթ. մ. թ. ա.) դեպի Ուրարտու կատարած արշավանքից հետո ուրարտական պետության վիճակի մասին գիտական գրականության մեջ կան տարբեր կարծիքներ։ Սարգոն II-ի տարեգրության 8-րդ տարվա նկարագրությունը, որտեղ խոսվում է ուրարտական թագավոր Ռուսա I-ին (735—714 թթ. մ. թ. ա.) պարտության մատնելու, երկրի կենտրոնական շրջանները և կրոնական կենտրոն Մուսասիր քաղաքը ավերելու և կողոպտելու, ինչպես նաև Խալդի աստծո արձանը հափշտակելու մասին[1]*, որի պատճառով Ռուսա I-ը ինքնասպան է լինում*[2]*, հիմք է հանդիսացել գիտական գրականության մեջ ընդունված այն տեսակետին, ըստ որի մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո ուրարտական պետությունը վերջնականապես ջախջախվեց և մղվեց երկրորդական պլան՝ անդառնալիորեն կորցնելով երկրի հարավային և հարավարևելյան շրջանները, այդ թվում նաև կրոնական կենտրոն Մուսասիրը*[3]*։ Ն. Ադոնցի կարծիքով մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո երկու երկրների պայքարում Ուրարտուն նորից նախաձեռնությունը իր ձեռքն է վերցնում, իսկ Ասորեստանը ստիպված է լինում պաշտպանողական դիրք գրավել*[4]*։ Թե այս երկու իրարամերժ կարծիքներից ո՞րն է ավելի մոտ իրականությանը, հնարավոր է պարզել ասուրական մի շարք լրտեսական բնույթի նամակներով, որոնք իր բազմաթիվ լրտեսների միջոցով ստանում էր Սարգոն II-ը։ Հետախուզական այս տեղեկությունները, լինելով դեպքերի ճշմարտացի նկարագրություններ, շատ ավելի օբյեկտիվ են, քան Սարգոն II-ի պաշտոնական տարեգրությունները։*

Բերենք այդ նամակներից մի քանիսը, որոնց մեջ հետաքրքիր տեղեկություններ կան մ. թ. ա. 714 թ. արշավանքից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանի ասուրա–ուրարտական փոխհարաբերությունների մասին։

Առաջին երկու նամակը գրել է ասուրական նահանգապետ Ուպախիր-Բելը, իսկ երրորդը՝ նահանգապետ Արիաեն և այն ուղարկել է թագաժառանգ Սինախերիբին, որը և այդ մասին զեկուցել է իր թագավոր հորը։

Ուպախիր-Բելի առաջին նամակը Սարգոն II-ին.

---

[1] Н. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (*այսուհետև՝* АВИИУ), № 49, *տող 367 և հաջ.* («Вестник древней истории», 1951, № 2, 3).

[2] АВИИУ, № 46, *տող 129 և հաջ.։*

[3] И. Мещанинов, Халдоведение, Баку, 1927, *էջ 46,* Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 209,* Г. А. Меликишвили, Наири-Урарту, Тбилиси, 1954, *էջ 296,* Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, *էջ 110,* Н. В. Арутюнян, Биайнили (Урарту), Ереван, 1970, *էջ 313, 438։*

[4] Ն. Ադոնց, *Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 122։*

«Թագավորին, իմ տիրոջը, քո ծառա Ուպախիր-Բել։ Թող խաղաղություն լինի թագավորին՝ իմ տիրոջը։ Թագավորի նահանգը լավ վիճակում է, ամրոցները լավ վիճակում են, թող թագավորի՝ իմ տիրոջ, սիրտը գոհ լինի։

Ուրարտուի թագավորի վերաբերյալ լուրերը.

— Ես հետախույզ ուղարկեցի, նրանք վերադարձան և ինձ ասացին հետևյալը.— Նահանգապետը, որը մեր դիմացն է և (մեկ) ուրիշ նահանգապետ նրա հետ խարդա բնակավայրում են, կատարում են պահակային ծառայություն փոխարքայի նահանգի դիմաց։ Բնակավայրից-բնակավայր մինչև Տուրուշպա նրանք ջարված են ռազմական կարգով։ Եկավ Արգիստիի սուրհանդակը հրամանով.— Այն աշխատանքի վերաբերյալ, որ ես քեզ հրամայել էի, այդ աշխատանքը չանես, կերակրիր քո ձիերին, մինչև քո մոտ նոր սուրհանդակ ուղարկեմ։

... Պալատական իթուացիները Եփրատից վերադարձել են ինձ մոտ։ Նրանք մեկնեցին իմ տեղակալի հետ։ Ես նրանց ուղարկեցի առաջին և երկրորդ վաշտերի հետ և նրանք դուրս եկան բնակավայրից։ Թող թագավորը՝ իմ տերը, գրի նրանց առաջնորդին, որպեսզի թագավորական մարդկանց նրանք ուղարկեն, միաժամանակ և կատարեն պահակային ծառայություն Շուրուբե քաղաքում։

Մինչև հունձը մենք պետք է նրանց հնազանդեցնենք»[5]։

Ուպախիր-Բելի երկրորդ նամակը Սարգոն II-ին.

«Թագավորին՝ իմ տիրոջը,— քո ստրուկ Ուպախիր-Բել։ Թող խաղաղություն լինի թագավորին՝ իմ տիրոջը։ Թագաժառանգը լավ է, ամրոցները բարվոք են, իմ տիրոջ՝ թագավորի սիրտը, թող գոհ լինի։

Ուրարտուի թագավորին վերաբերող լուրերը.

Սուրհանդակը եկավ. նահանգապետը, որին ես գաղտնի գրել էի, եկավ և ինչպես այդ մասին թագավորը՝ իմ տերն է ինձ գրել, նա խոսեց նրա հետ։ Նա ասաց.— Ինչո՞ւ մենք խաղաղության ենք պահպանում, իսկ դո՞ւք, դո՞ւք գրավում եք մեր ամրոցները։

Ի՞նչ կարող եմ ես անել։

Եթե ես ոտնձգություն եմ արել ձեր սահմանների նկատմամբ, կամ ձեր ամրոցների, ապա իմ ձեռքում ավազ է։ Նրա զինվորական ջոկատները հավաքված են։ Նա կատարում է պահակային ծառայություն Խարդայում։ Այդպիսին են նրանցից լուրերը»[6]։

Նահանգապետ Արիաեի նամակը թագաժառանգ Սինախերիբին, ուր Արիաեն թագաժառանգին հայտնում է Արգիշթե II-ի տված հրամանը իր նահանգապետներից մեկին.

«Հավաքեցեք ձեր զորքերը, գնացեք կենդանի բռնեցեք Ասորեստանի թագավորի նահանգապետներին Կումայայում[7] և քարշ տվեք նրանց ինձ մոտ»[8]։

---

[5] Leroy Waterman, Royal Correspondence of the Assyrian Empire, I—IV („Universite of Michigan studies", XVII—XX, 1930—1936 (այսուհետև՝ RCAE), № 424, տե՛ս նաև՝ АВИИУ, № 50, նամակ 34։

[6] АВИИУ, № 50, նամակ 35. RCAE № 548 (այստեղ «իմ ձեռքում ավազ է» նախադասության փոխարեն թարգմանված է «սուրը ձեռքումս է»)։

[7] АВИИУ, № 50, նամակ 14։

[8] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 124։

Արիաեն խնդրում է նաև անհապաղ օգնական զորքեր ուղարկել, քանի դեռ ուրարտացիները ի կատար չեն ածել այդ հրամանը[9]։ Բացառությամբ Ն. Ադոնցի, ուսումնասիրողները հետախուզական այս տեղեկությունները (չնայած իրենց պարունակած արժեքավոր տվյալներին) բավարար չափով չեն օգտագործել տվյալ ժամանակաշրջանի պատմությունը մեկնաբանելիս[10]։ Գ. Մելիքիշվիլին, Բ. Պիոտրովսկին և Ն. Հարությունյանը վկայակոչելով նամակների հետախուզական բնույթը, նշել են, որ մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո էլ Սարգոն II-ը ուշադիր հետևում էր Ուրարտուում տեղի ունեցող իրադարձություններին[11]։ Բայց եթե Բ. Պիոտրովսկին հանգամանորեն չի անդրադարձել նամակների բովանդակությանը, ապա Գ. Մելիքիշվիլին և Ն. Հարությունյանը դրանց անդրադառնում են ավելի հանգամանորեն։ Գ. Մելիքիշվիլին գրում է. «...Սարգոնին հայտնվում է (ուրարտական) մի նահանգապետի (հնարավոր է ասորեստանցիների գաղտնի լրտես) ասածը.— ինչո՞ւ մենք խաղաղության ենք պահպանում, իսկ դուք գրավում եք մեր ամրությունները։ Ասորեստանցիները, հավանաբար, նեղում են ուրարտացիներին, գրավում են նրանց սահմանային ամրությունները, իսկ ուրարտացիները չեն համարձակվում վճռական պայքարի մեջ մտնել նրանց հետ»[12]։

Հիշյալ նամակի մեջ հետաքրքրող հատվածը գրեթե նույն կերպ է մեկնաբանում նաև Ն. Հարությունյանը, իսկ առաջին նամակի մասին գրում է. «...Այս նամակից երևում է, որ ասուրական զորքերը լրիվ պատրաստ են ռազմական գործողություններ սկսելու համար և դիրքեր են գրավել ընդհուպ մինչև թագավորության մայրաքաղաքը՝ Տուշպա։ ...Սարգոնը մտադիր էր հնազանդեցնել ուրարտացիներին մինչև հունձի սկսվելը»[13]։

Ինչպես տեսնում ենք, հետախուզական այս տեղեկությունները թեև տեղ են գտել մասնագիտական գրականության մեջ, բայց դրանք առաջին դեպքում օգտագործվել են կամ սոսկ որպես ապացույց այն բանի, որ արշավանքից հետո էլ Սարգոն II-ը ուշադիր հետևում էր Ուրարտուում տեղի ունեցող իրադարձություններին, կամ էլ, երկրորդ դեպքում, մեկնաբանվել են այնպես, որպեսզի որևէ կերպ չհակասեն Սարգոն II-ի պաշտոնական տարեգրությանը և մ. թ. ա. 714 թ. արշավանքի նկարագրությանը։ Սակայն իրականում նամակների բովանդակություններն այլ բան են հուշում։ Դրանց սկզբում կիրառված մեծարման խոսքերը՝ «թող թագավորի սիրտը գոհ լինի», «նահանգը և ամրոցները լավ վիճակում են», հավանաբար, նահանգապետների կողմից ընդունված կարգ էր թագավորին դիմելու համար, թեև բոլոր նամակում կարող է խոսվել ասուրական նահանգների և ամրոցների ոչ այնքան «լավ» վիճակի մասին։ Ուպախիր-Բելի առաջին նամակից պարզորոշ երևում է, որ ոչ թե ասորեստանցիներն են ռազմական գործողություններ սկսելու նպատակով դիրքեր գրավել մինչև Տուշպա, ինչպես գրել է Ն. Հարությունյանը, այլ ուրարտացիներն են բնակավայրից բնակավայր ռազմական կարգով շարվել մինչև Տուշպա։ Եվ

---

9 АВИИУ, № 50, նամակ 14։

10 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 122։

11 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 304, Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 111, Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 316։

12 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 304։

13 Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 316—317։

ինչպես նշում է Ի. Դյակոնովը, առաջին նամակի «այն աշխատանքի վերաբերյալ, որ ես քեզ հրամայել էի, այդ աշխատանքը չանես, կերակրիր քո ձիերին», տողի «աշխատանք» բառի տակ թաքնված է ասորեստանցիների դեմ ռազմական գործողություններ սկսելու հրամանը[14], որը, ստկայն, Արգիշթե II-ը ժամանակավորապես հետաձգում է, միևնույն ժամանակ հրամայելով պատրաստ պահել ձիերը մինչև նոր սուրհանդակի գալը։ Իսկ առաջին նամակի վերջին տողը, ուր ասվում է, թե «մինչև հունձը մենք պետք է նրանց հնազանդեցնենք», վերաբերում է ոչ թե ուրարտացիներին, այլ, ինչպես պարզորոշ երևում է տեքստից, պալատական իթուացիներին, որոնք, հավանաբար, չեն ցանկացել ենթարկվել և պահակային ծառայություն կատարել Շուրուբե քաղաքում։ Իթուացիները արամեական քոչվոր ցեղեր էին, որոնք ապրում էին Ասորեստանից հարավ, Տիգրիսի միջին հոսանքներում և ասուրական պետության մեջ կատարում էին ժանդարմական ծառայություն[15]։

Եթե առաջին նամակում անորոշ են մնում որոշ հարցեր, ապա երկրորդ և երրորդ նամակները պարզ պատկերացում են տալիս երկու երկրների ուժերի փոխհարաբերությունների մասին։ Այդ «հարյուրավոր բերդեր գրավածը» և Ուրարտուն «հավերժ լաց ու կոծի»[16] երկիր դարձրած Սարդոն II-ի խոսքերն են, որ Ուպախիր-Բելի սուրհանդակը հայտնում է Արգիշթե II-ին. «Ինչո՞ւ մենք խաղաղություն ենք պահպանում, իսկ դո՞ւք, դո՛ւք գրավում եք մեր ամրոցները...»[17]։

Ի՞նչ խոսք կարող է լինել ասորեստանցիների կողմից ուրարտացիներին հպատակեցնելու կամ նրանցից որևէ հողային պահանջ ունենալու մասին, երբ Սարգոն II-ի պատվիրակը նմանորինակ հուսահատական բառերով է դիմում Արգիշթե II-ին։ Ստկայն, եթե հիշենք հաջորդ, նահանգապետ Արիաեի նամակը, կտեսնենք, որ այդ խոսքերը բոլորովին էլ տարօրինակ չեն։ Կարելի է պնդել, որ Արգիշթե II-ը ակնհայտորեն ուժի դիրքերից է խոսում ասորեստանցիների հետ։ Նա իր նահանգապետներից մեկին հրամայում է. «Ձեր ունեցած զորքերով բռնեցեք Ասորեստանի նահանգապետներին Կումայայում և քարշ տվեք նրանց ինձ մոտ»[18]։ Որից հետո սարսափահար Արիաեն թագաժառանգից օգնական ուժեր է խնդրում՝ պաշտպանվելու համար[19]։

Կումայա քաղաքը, հավանաբար, սահմանային ասուրական քաղաք էր, ուր պետք է մտնեին ուրարտական զորքերը, ասուրական նահանգապետներին բռնելու համար։ Կումայա քաղաքը մասնագետների կողմից սովորաբար նույնացվում է ուրարտական տեքստերի Կումենու և ասուրական տեքստերի Կումմե քաղաքի հետ և տեղադրվում Մեծ Զաբ գետի միջին հոսանքներում, Մուսասիրից հարավ, ներկայիս Կոմանե-Կուվանե գյուղի տեղում[20], կամ Արևելյան Խաբուրի հովտում՝ Նիբուր (ներկայիս Ջուդի-դաղ) լեռան շրջակայքում[21]։

---

14 АВИИУ. № 50, նամակ 34, ծան. 6։

15 АВИИУ, № 50, նամակ 28, ծան. 5։

16 АВИИУ, № 46, տող 129 և հաջ., № 49, տող 405 և հաջ.։

17 АВИИУ. № 50, նամակ 35։

18 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 124։ АВИИУ, № 50, նամակ 14։

19 АВИИУ. № 50, նամակ 14։

20 Г. А. Меликишвили, К вопросу о древнейшем очаге урартских племен («Вестник древней истории», 1947, № 4, էջ 25), АВИИУ, № 3.

21 Н. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 364։

Կումայան անտարակույս ասուրական սահմանային քաղաք էր և հյուսիսում սահմանակից էր Մուսասիրին, որի նահանգապետը, հավանաբար, պետք է իրագործեր Արգիշթե II-ի հրամանը։ Եվ եթե Մուսասիրը գտնվում է Ուրարտուի կազմում, հետևաբար, ժխտվում է նաև ընդունված այն տեսակետը, ըստ որի մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո այն անդառնալիորեն միացվել էր Ասորեստանին։ Այս ժամանակաշրջանում Մուսասիրի՝ Ուրարտուի կազմի մեջ լինելը մեկ անգամ ևս ապացուցվում է Սարգոն II-ի հաջորդ Սինախերիբի (705—681 թթ. մ. թ. ա.) մի արձանագրությամբ, ուր խոսվում է Նինվեն մեծացնելու, հզոր պարիսպներ կառուցելու և դեպի մայրաքաղաք ջրանցք անցկացնելու մասին։ Արձանագրության մեջ ասվում է. «...Իսկ ջրերի զանգվածը ես հանեցի Թաս լեռից, Ուրարտուի սահմանի վրա գտնվող բարձր լեռից...»[22]։ Ինչպես հայտնի է, Թաս լեռը գտնվում է Նինվեից 60—70 կմ հյուսիս[23]։ Ուստի, եթե ուրարտական սահմանը անցել է Թաս լեռան մոտով, ապա այդ ժամանակ, ինչպես ճիշտ նկատել է Ի. Դյակոնովը, Մուսասիրը և Կումմեն եղել են Ուրարտուի կազմում[24]։ Թեև Գ. Մելիքիշվիլին կտրականապես ժխտում է նման տեսակետը և հյուսիսային կողմից Ասորեստանի տարածության նման փոքրացումը համարում է ոչ հավանական[25], սակայն արձանագրությունը ինքնին այդ է վկայում։

Այսպիսով, ավելի հավանական է Ն. Ադոնցի կարծիքը, որը հաստատվեց վերոհիշյալ փաստերով։ Առաջավոր Ասիայում ուժերի փոխհարաբերության կտրուկ շրջադարձի մասին՝ հօգուտ վերստին հզորացած ուրարտական պետության, կասկածի ենթակա չէ։ Փաստորեն Ռուսա I-ի՝ Ասորեստանի դեմ մղվող երկարատև և անհաշտ պայքարը Արգիշթե II-ը կարողացավ հասցնել հաղթական ավարտի, պահպանելով Ուրարտուի տարածական միասնությունը և հզորությունը։ Դեռ ավելին, Արգիշթե II-ը դիմեց նոր նվաճումների։ Նա արևելքում հասավ մինչև Կատպից ծովի ափերը, իսկ հյուսիս-արևվելքում գրավեց ներկայիս Զանգեզուրը։ Այդ են ապացուցում Արգիշթե II-ին պատկանող նորահայտ սեպագիր արձանագրությունները՝ գտնված Արդաբիլից և Սարաբից[26], ինչպես նաև Սիսիանից[27]։

Հետևաբար, Սարգոն II-ի՝ մ. թ. ա. 714 թ. արշավանքից հետո Ուրարտուն ոչ միայն տարածական կորուստներ չունեցավ, այլև կարողացավ նոր երկրներ նվաճել և պահպանել իր ռազմական հզորությունը՝ Առաջավոր Ասիայում գերիշխանություն հաստատելու համար, ինչպիսին էր Արգիշթե I-ի (786—764 թթ. մ. թ. ա.) և Սարդուրե II-ի (764—735 թթ. մ. թ. ա.) ժամանակներում։

---

22 АВИИУ, № 60.

23 АВИИУ, № 60, ծան. 7։

24 Նույն տեղում, ծան. 8։

25 Г. А. Меликишвили, Наири-Урарту, էջ 297։

26 W. G. Benedict, Two Urartian Inscription from Azerbaijan („Journal of Cuneiform Studies", XIX, № 2, New Haven, 1965), № 1, № 2.

27 Արձանագրությունը հրատարակության է պատրաստում Ն. Վ. Հարությունյանը (գտնվել է 1975 թ. աշնանը)։

УРАРТСКО-АССИРИЙСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ ПОСЛЕ ПОХОДА САРГОНА II

ВАГАН ГАЙСЕРЯН

Резюме

В урартоведении бытует точка зрения, согласно которой, после похода ассирийского царя Саргона II на Урарту в 714 г. до и. э. государство пришло в полный упадок, потеряв южные и юго-восточные районы, в том числе религиозно-культовый центр г. Мусасир.

Урартские клинописи, принадлежащие царю Аргиште II, найденные в Ардебиле, Сарабе и в Сисиане, а также некоторые ассирийские разведывательные донесения времен Саргона II и Синаххериба свидетельствуют о том, что борьбу, начатую царем Русой II, завершил царь Аргиште II, сохранив единство и могущество своего государства, утвердив в Передней Азии свое влияние.